

ցնելու իրենց գիտական պաշարը: Իմաստասիրական եւ աստուածաբանական գիտութիւններու դասնախմբական առած, «ԱՅճիւն» համալսարանէն, վաճառք կը վերադառնան 1890ին:

Մեծաւորներու կարգադրութեամբ՝ կը նուիրուի իսկոյն կրթական ու դաստիարակական ասպարէզին, իբրեւ ուսուցիչ եւ օգնական վերակարգուի վանքի նորընծաներուն (1891-1893): Այս շրջանին է որ կը պատրաստէ աստուածաբանութեան իր մեծ դասագիրքը: Չարաչար աշխատանքէն յոգնած եւ հիւանդ, 1894-1895 շրջանը կ'անցընէ Պոլիս եւ յաջորդաբար նաեւ Անքարա, ուր կ'այցելէ իր ծնողքին, եւ հայրենիքի օդով ու ջուրով կազդուրուած՝ կը վերադառնայ վանք, վերստին նուիրուելու իր դրական ու կրթական աշխատանքներուն: 1895-1896 շրջանին, առժամայէս կը վարէ Մխիթարեան Տպարանի տեսչութիւնը: 1896-1899 տարիներուն, հոգեւոր դաստիարակ եւ առաջնորդ է վանքի երեւոյցային աշակերտութեան, վարժարանի բաժնին մէջ. եւ հոսկ տարի մըն ալ, 1899-1900, Մեծաւոր Նորընծայարանի աշակերտներուն:

Այս ժամանակամիջոցիս, 1898-1899, տարի մը վարած է «Բագմավէպ» հանդէսի խմբագրապետութիւնը, եւ շարունակած է իր աշխատակցութիւնը մինչեւ 1902, արժէքաւոր յօդուածներով:

Դարձեալ հիւանդագին, առողջական խնամքի համար կ'անցնի Եղիսարեթուպոլիս, ուր վանք եւ դպրոց ունէր Միարանութիւնը, անկէ Պուտափեշտ եւ Վիեննա. առողջացած՝ վանք կը վերադառնայ 1900ի վերջերը, ուր իրեն կը յանձնուի Տպարանի Տեսչութիւնը: Այդ շրջանին լոյս կը տեսնէ իր երկրորդ ուսումնասիրութիւնը՝ մադնիսական քունի մասին:

1902-1906 կը վարէ Մուրաթ-Ռափայէյեան վարժարանի տեսչութիւնը, յաջորդելով Հ. Մինաս Վրդ. Նուրիխանի:

Այդ օրերուն կը հասունանայ մեր դրականութեան ոսկեհատ ցորենը՝ Դանիէլ վարուժան, վարդապետին գուրդուրոտ խնամքին տակ:

1903-1906ի շրջանին՝ իբր Ընդհ. Առաջիկայ, մաս կը կազմէ վանական վարչական ժողովին, իր իմաստուն խորհուրդներով: Այս ժամանակամիջոցիս է որ կը հրատարակէ իր մեծարժէք հատորը, էակներու ծագումին մասին:

Հակառակ հոգեբանական ու փիլիսոփական ուսումներով հմուտ եւ փորձառու վարդապետին առաջնորդական ձիրքերուն, 1906ին, տխուր դէպքերու առիթով, կը ստիպուի թողուլ Մուրաթ-Ռափայէյեան վարժարանի տեսչութիւնը եւ ժամանակ մը անցնի Եղիսարեթուպոլիս եւ Հոմ:

1907-1908ին զինք կը գտնենք դարձեալ Եղիսարեթուպոլիս (Մամուշլար, Պաշտպալով), իբր քարոզիչ եւ ուսուցիչ: Իսկ 1908-1910ի շրջանին իրեն կը հանդիպինք Անքարա, իր ծննդավայրին մէջ, ուր մեծ համբաւ կը վայելէ: Կը պատմուի թէ ժողովուրդը ի՜նչպէս խուռնեցած կը դիմէր եկեղեցի, իր քարոզներուն ունկնդրելու. ամբողջ գիւթելու հմայքն ունէր ան: Սուրբ Գրային եւ աստուածաբանական մեծ հմտութեան հետ, գիտէր հաղորդել բարեպաշտական ջերմ զգացումներ: Գիտական եւ հոգեւոր վարդապետին ջանքերը կը սկսին ծաղկիլ: Տեղւոյն թեմականը Գրպո. Պահապանեան եւ ժողովուրդը միացած կը խնդրեն որ վարժարան մը բանայ, ապահովելու մանուկներուն հայեցի կրթութիւնը: Դժբախտաբար Միարանութեան համար անկարելի կ'ըլլայ իրականացնել ատելի, եւ վանական կարեւոր հրահանգներու վրայ՝ քայլերը կ'ուղղէ այլուր:

1910ին զինք կը գտնենք Տրապիզոն, նախ իբր փոխանորդ Տեսչի տեղւոյն Մխիթարեան վարժարանին (1910-1912), յաջորդաբար իբր հոգեւոր Հայր (1912-1914), եւ հոսկ իբր Տեսուչ, մինչեւ կարմիր թրուականը:

Վրայ կը հասնին տխուր դէպքերը. Տրապիզոն կը ռմբակոծուի ռուսական նաւատորմի կողմէ. տարադրութիւնը սկսած է. դպրոցները փակուած են, աշակերտները ցրուած. իր օգնական երկու վարդապետներով (Հ. Կարապետ Տէր-Սահակեան եւ

Հ. Թոմաս Օտապաշեան) միասին փոխադրուած են ամարանոցը, Թոց գիւղին մէջ. իրենց կը միանան վեղարաւոր երեք Հայրեր:

Հ. Ստեփան Վրդ. 1915ի Յունիսի ընկերները կ'իջնէ քաղաք, Մխիթարեան վարժարանի շէնքի դրաման առթիւ, դպրոցական դոյքերը փոխադրելու վեղարաւորներու վանքը, մինչ դպրոցը կը դառնար զինուորանոց:

Այդ սարսափի օրերուն, Յունիսի սկիզբը կը պաշարուի Թոց, ուրկէ կը տարուին քանի մը աշակերտները՝ Հ. Կարապետին հետ, գէպի Թօփալլը. ճամբան, ձորին մէջ, ուրիշ հայ տեղացիներու հետ կը նահատակուին:

Գրեթէ միաժամանակ, կը ձերբակալուին Հ. Ստեփան Սարեան եւ Հ. Թոմաս Օտապաշեան, որոնք ապաստանած էին վեղարաւորներու վանքը, եւ բաժանակից կ'ըլլան իրենց հայրենակիցներու դաժան բախտին, Տէյիւրմէն Տերէի ձորերուն խորը:

Տրապիզոնի խալաքի Հիւպատոսը Կորինիի պատմածներուն համաձայն՝ Հ. Ստեփան Սարեանի համար ազատելու միակ միջոց կը մնայ խալաքի վեղարաւորներու շարքերուն մէջ մտնել. երբ ատիկա ալ անկարելի կ'ըլլայ՝ աստուածավախ վարդապետը կը յայտարարէ. «Եթէ Աստուծոյ կամքն այդպէս է, տա՛նք մեր աւելնը՝ իր փառքին համար»:

Գրպո. Նապիեանի Յուշերուն համաձայն (հտր. Ա. էջ 220), տարադրութեան պահուն, Հ. Ստեփան կը գտնուէր Տրապիզոնի մայրապետներուն մօտ, քաջալերելու եւ մխիթարելու համար անպաշտպան կուսանները. մինչ ոստիկանները ձեռք կը դրնեն կոյսերուն վրայ, իրենց յատուկ ծրարադրներով, Հ. Ստեփան ուժգին կը բողբոջէ եւ կը խնդրէ որ խնայեն, յանուն Տրապիզոնի, իբր պատասխան՝ քարերով կը Աստուծոյ. իբր պատասխան՝ աստուածաբուսած են ու կը ջախջախեն ու կզակը: ծավախ վարդապետին բերանն Մտեիւր պաշտպան սուրբին՝ Նախավիայ Ստեփանոսի նման, քարկոծուած նահատակը կ'ըլլայ Հ. Ստեփան Սարեան:



Հ. Ստեփան Սարեան 1900ին

ԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ

Չեմ գիտեր թէ ո՛ւր են հիմա քու ոսկորներդ, սիրելի՛ եւ բաղձաւոր շար նահատակ վարդապետ: Աստուծոյ կեանք մը ունեցար, նոյնիսկ խոստովայոյ, ուր չըրակեցան լքման վայրկեաններ: Բայց քու քահանայութեանդ 28 տարիները բաւեցին որ հսկայ վաստակ մը արձանագրէիր ի սրտս հայ մշակոյթին:

Պիտի չուզէի նահատակի անարատ պատմութեանդ վսեմութիւնը նսեմացնել, քեզի հետ միասին պիտի չըրատարակած հատորներդ: Դեռեւս դեռ շատ բաներ ունէիր գրելիք, բուն հասուն տարիքիդ: Բայց թողած ժառանգութիւնդ իսկ բաւական է քեզ դասելու Մխիթարեան Կաճառի մեծ վաստակաւորներու շարքին:

1. - «Ընթացի տեսական աստուածաբանութեան» (տպ. Վենետիկ Ս. Ղազար 1894, էջ 829): Ահա առաջին հրատարակը:

